




Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Փ Ա Ռ Ա Պ Ա Ն Ծ Տ Ա Ր Ե Դ Ա Ր Զ Ը



այ ժողովրդի պատմության մեջ շրջադարձային նշանակություն ունեցող համարիվ է 1920 թվականի նոյեմբերի 29-ը: 34 տարի առաջ այդ օրը իրագործվեց հայ ժողովրդի ֆաղափական ազատագրումը: Դառերով տրոհված, մահվան վիճի եզերված հասած բազմաշարժար հայ ժողովուրդը, վիրավոր ու արշավանափամ, ապրեցավ և ստեղծագործեց անմեռ հավատով լցված, ոտքի կանգնեց և ոռոս մեծ ու ազնիվ ժողովրդի եղբայրական օջևուրյամբ, մի անգամ բնորոշ թոքափեց դարերի ստրկության փողին: Իրականություն դարձավ հայ ազատասեր ժողովրդի դարավոր երազը:

Հարուստ է հայ ժողովրդի պատմությունը ազգային ազատագրական պայքարի հերոսական դրվագներով: Իր Հայրենիքի աշխարհագրական դիրքի բերմամբ կանգնած լինելով Արևելքի և Արևմուտքի աշխարհակալ հզոր տերությունների հանգուցային ճանապարհի վրա, հայ ժողովուրդը հարկադրված է եղել լարված պայքարի մեջ մտնել՝ իր ֆիզիկական գոյության պահպանման համար: Հայ ժողովրդին խորք է եղել հուսահատությունը. նա փորապես հավատացած է եղել, որ հայոց «սևակնած» երկնքի վրա մի գեղեցիկ օր արև կծագի, կիպայի ծիածանը հայ երկնակամարի վրա: Հայ ժողովրդի լավատեսության հիմքը նրա անդրդվելի հավատն է եղել իր ուժի, իր կենսունակության նկատմամբ:

Նվաճա հայ ժողովրդի կյանքի ամենածանր օրերին, հայ երկնակամարի վրա ծա-

գեց փրկության արշալույսը: Նա տեր դարձավ իր ազատության, իր հացին, հողին, պատվին ու կյանքին:

Սովետական Հայաստանն է հայ ժողովրդի երազների, դարավոր տառապանքների վերջնական ու յուսավոր հանգրվանը, խաղաղ ու ապահով նավահանգիստը, Ավետյաց երկիրը:

Անհնարին է այստեղ մի առ մի քվարկել տնտեսական և կուլտուրական այն խոշոր տեղաշարժերը, որ կատարվել են Հայաստանում 34 տարիների ընթացքում: Այդ մասին են վկայում գործարանների և ֆաբրիկաների երկնք խոյացող ծխնեղյուզների ճոր շարժերը և ճոր տեխնիկայի հիման վրա վերակառուցվող գյուղատնտեսությունը: Այդ մասին են վկայում աշխարհի չորս կողմից Հայաստան այցելող հյուրերը, որոնք հիացմունքով ձեռնառնագրում մեր երկրի, մեր ժողովրդի աննախընթաց հաջողությունները: Երբ մենք բերքերում կարդում ենք Սովետական Հայաստան այցելած իտալացի հյուրերի տպավորությունները, որ «Հայաստանը ծաղկում է և բարգավաճում», կամ անգլիացի կանանց կարծիքը մեր ֆաղափամայր Երևանի մասին, որ նա «աշխարհի գեղեցիկ ֆաղափներից մեկն է», մեր սիրտը արդարացի հպարտության զգացմունքով է լցվում: Մեկ դար առաջ ո՛ւմ մտքով կարող էր անցնել, որ բոլորից արհամարհված, բոլորից սոսնակոխ արված մեր նվիրական Հայրենիքը ի վիճակի կլինի ոտքի կանգնել և այսպիսի հրաշքներ գործել:

իր ազգային մեծ տոնի առթիվ, հայ երախտագետ ժողովուրդը անկեղծ հարգանքի, խոր երախտագիտության ջերմ խոսքով իր ավագ եղբոր՝ ռուս մեծ ու հերոսական ժողովրդի նկատմամբ:

Հայ ժողովրդի ազատագրության և առաջադիմության գործում բացահայտ է ռուս մեծ ժողովրդի կատարած դերը: Հայ ժողովուրդը, իր բովանդակ կյանքում, միշտ ջերմությամբ, մեծարանքով և խոր երախտագիտությամբ կնիքի աղյ:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը վերջին դարերում սերտորեն կապված է եղել ռուս մեծ ժողովրդի անվան ու հերոսական պատմության հետ՝ Խրաչեյ Օրու և Դավիթ-Քեկի օրերից մինչև այսօր:

Հայ ժողովուրդը, հայ մտավորականությունը, հայ աշխատավորությունը միշտ էլ շատ բարձր են գնահատել ռուս մեծ ժողովրդի բանկազին բարեկամությունը:

Հանձին Ռուսաստանի՝ հայ ժողովուրդը տեսնում էր այն միակ ու ռեալ ուժը, որի օգնությամբ հնարավոր կլիներ բոքափել գերությունն ու ստրկային անազանությունը:

Հայ և ռուս ժողովուրդների հարաբերության մեջ մի նոր էջ է բացվում, երբ 1828 թվականին Կովկասը, աղքատ և Արևելյան Հայաստանը ազատագրվում են պարսկական լծից: Հայերի ազատագրումը օսմանյան և պարսկական բռնատիրական լծից և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին՝ պատմական շրջադարձային կետ է հանդիսանում հայ և ռուս ժողովուրդների հարաբերությանը պատմության մեջ: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին՝ նոր պայմաններ ստեղծեց հայ ժողովրդի ազգային, կուլտուրական, տնտեսական զարգացման համար: Սփյուռնում «գործեն մոլորական աստեղաց» ցրված հայ ժողովուրդը կարողացավ համախմբվել իր պատմական հողերի վրա, զարգացնելով իր ազգային կուլտուրան: Առաջինը Արևելյանն էր, որ «Վերհ Հայաստանի» պատմական վեպում, իբրև մեծ հայրենասեր, ցույց տվեց հայ ժողովրդի համակրանքն ու վրստահությունը ռուս մեծ ժողովրդի նկատմամբ, որի շնորհիվ հայ ժողովուրդը փրկվել էր օսմանյան և պարսկական դաժան բռնակալությունից: «Ռուս անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես նրա արյունը,

որով մենք ազատվել ենք ընդմիշտ... Ռուսի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին՝ սեր և անձնվիրություն»: Արևելյանի այս փառափառ հեռադուրությունը ելնում էր հայ ժողովրդի արմատական շահերից և խոր համոզմունքից: «Վերհ» մի «հզոր շատագուրություն և օրհներգ էր ռուս ազգին, նրա ուժին, բարերարվածի ու փրկվածի ներքող՝ ողողված ուրախության արցունքներով»:

Արևելյանի ռուսական օրհնագրական շարունակեց ու զարգացրեց հետագայում հայ ժողովրդի մեծ գավակ, բոցաշունչ հայրենասեր Միխայիլ Նալբանդյանը՝ «հայ ազգի վիճակը» ընդմիշտ կապելով ռուս ժողովրդի կյանքի և վիճակի հետ:

Հետագայում հայ մյուս մեծ գրողները՝ Սուրենյանը, Շահագիրը, Հովհաննիսյանը, Թումանյանը, Իսահակյանը, Տերյալը ամրապնդել ու խորացրել են հայ և ռուս կուլտուրաների փոխադարձ կապը հոգուտ երկու ժողովուրդների մեծեցման. «Միմի և պատկանում էր նրան խնամարկել են ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև»:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով հայ և ռուս ժողովուրդների պատմական հարաբերությունը վեր ածվեց սրտառույ ու անփակտելի բարեկամության: Հայ ժողովուրդը ունեցել է և ունի մի անկեղծ և անշահախնդիր բարեկամ. դա Ռուսաստանն է և ռուս մեծ ժողովուրդը, որին նա սրտագին ողջույնի խոսք է հղում իր ազգային մեծ տոնի առթիվ:

Հայ ժողովուրդը 34 տարի է, ինչ անստեղծագործում է իր հայրենի հողի վրա և իր տաղանդով, իր ստեղծագործ աշխատանքով շփեղ մարմին է տալիս իր լուսակերտ երազներին: Անցնող յուրաքանչյուր տարի երջանկության և հաղթության նոր զարուններ է բերում հայ Հայրենիքին ու հայ ժողովրդին:

Պայծառ է այսօր հայ ժողովրդի ներկան: Դարերի դիմաց նա վառել է իր գոյության անշեղ խառնուրդ, ու վառ հավատով նայում է ապագայի խոստմունքից աչքերին, աշխատում է, ստեղծագործում և օրհնում այն փրկարար ու նախախնամական ձեռքը, որը հանապարհ է բացել նրա համար դեպի առևաշող ապագան:

ՓԱՌՔ ՎԵՐԱՄՆԱՎԱՍՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ:

